# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Սեպտեմբերի 4-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նշան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 8-ին, հինգշաբթի. - Դ. օր Խաչի պահոց: Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Սեպտեմբերի 11-ին, կիրակի. - ԽԱՉՎԵՐԱՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի...» (Հովհ. ԺԲ 24) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 21):

Հրնթացս Ս. Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն:

***Սեպտեմբերի 12-ին, երկուշաբթի. - Տօն է Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի վերջում կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***Սեպտեմբերի 18-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Հրնթացս Ս. Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն:

***Սեպտեմբերի 25-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի ահաւոր եւ անպատում պաշտօնին կատարեցաք եւ հրաւիրուեցաք» (Մաշտոց ձեռնադրության) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

Հրնթացս Ս. Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն: